

ԲԵՃԱՅԻՆԵՐ ԿԱՄ ԲԱՐԻՉՄ *

41. Այսպիսի յորդորներ, խրատներ և կտակներ անթիւ են Բէհա-Ուլլահի գրուածքների մէջ, որոնցից իննը հատորը 1890—2 թ. տպագրուած է Բոմբէում: Սրանից աւելի օրինակներ տալը կարիք չհամարելով, մի քանի խօսքով էլ որոշենք Բէհաի սկզբունքը:

Հետեւելով քրիստոնէական վարդապետութեան հիմունքին, Բէհաի հետևողների համար գոյութիւն չունի՝ ոչ ազգ, ոչ ցեղ, ոչ տոհմ, ոչ լեզու, ոչ դասակարգ, ոչ սեռ և ոչ էլ ստրկութիւն. մարդիկ համահաւասար են ծնուած և համահաւասար էլ մեռնելու են: Նրա վարդապետութեան համաձայն ամբողջ հողագունդը համայն մարդկութեան է պատկանում, մարդիկ անխտիր հաւասար եղբայր են, համահաւասար ժառանգորդ այն բոլոր բարեքին, բերքին, ինչ որ շնորհուել է ընդհանրութեան: Նա հակառակ է ստրկութեան և այս մասին Վիկտորիա թագուհիի գրած թղթում իւր գոհունակութիւնն է յայտնում գերեզմանառութեան դէմ ձեռք առած միջոցների համար և առանձին համակրութիւնն է ցոյց տալիս, որ թագուհին ժողովրդին իրեն հետ հաւասարելով, նրան է յանձնել պետութեան վարչութեան ղէկը (պարլամէնտին): Նապօլէօն III-ին գրած թղթի մէջ հրամայում է հեռանալ գահից, փառքից, մերկանալ յափշտակած կարողութիւնից և երկիրը յանձնել ժողովրդին, որ ինքն իրեն կառավարէ (խորհրդարանով): Չանսալու դէպքում սպառնում է հետարին խայտառակ անել թշնամիների ձեռքով, որոնք զըզրդացնելով ու զողողացնելով պիտի պաշարեն գեղարուեստի մայրաքաղաքը և նրան մատնեն սոսկալի անարգանքի: Ալի փաշային գրած նամակում յորդորում է Աբդու Ազիզին ժողովրդի ներկայացուցիչներից ժողով գումարել և արդարութեամբ դատել ազգաբնակիւթիւնը: Իրեն Ազրիանուպոլ արքայութեան համար արած անիրաւութիւնը յիշեցնելով, յորդորում է զգաս-

տանալ. հակառակ պարագային մերձաւորների ձեռքով խողխող-
ուելլը, անհետանալը իմացնելով, յայտնում է, որ Ադրիա-
նուպոլն էլ սրա նման ուրիշ շատ քաղաքներ էլ պիտի անջատուի
նրա իշխանութիւնից, պիտի յանձնուի նորանոր կառավարիչ-
ների ու թագաւորների: (Այս երեք նամակն էլ գրուած է 1866-7թ.
Ադրիանուպոլի աքորավայրից:) «Թէհրան» վերնադրով տուած
Լոնի մէջ Բէհան բացատրելով, թէ մարդկութեան թշնամիները
կրկին են Ա. խտապահանջ կղերը իրենց երևակայական տե-
սիւններով և դժոխքի տանջանքներով սարսափեցնելով ժողովր-
դին կորզում են նրա սոված մանուկների հացը, և Բ. անսահման
իշխանապետները իրենց սրով ու հրով մերկացնում են թշուա-
սին ու այրին իրենց մարմինը ծածկող ու տաքացնող հագուս-
տից: Այս թղթով նա աւետում է Թէհրան քաղաքին, որ շատ
ձօտէ նրա ուսմկավարական իշխանութիւնը, որով ժողովուրդը
ինքն իրենց պիտի կառավարէ, պիտի ցամաքեցնէ թշուա-
սրտասունքը և պիտի յազեցնէ ու տաքացնէ որբին ու այրիին,
վերջ տալով նրանց մրմունջներին:

42. Ռամկավարական սկզբունքի աւելի դրական ապացոյցն
է նոյնպէս, Բաբի և Բէհա-Ուլլահի հաստատած «Ռիջալի» և
«Ադլի» ժողովները, որոնք ընտրուած են ժողովուրդից և համայն-
քից: Քիթաբի Ազդէսի մէջ գրուած է:

«Ալլահը հրամայեց ամէն քաղաքի-աւանի համար մի մի
արդարութեան տուն հիմնել, (տասն) իննը մարդ ընտրէ ժողո-
վուրդը եթէ աւելի լինի՝ անշուստ է: Այդ մարդիկ ժողով մըտ-
նելիս այնպէս շարժուին, որ իբր Աստուծոյ ներկայութեանն
են դիմաւորում, Աներևոյթը տեսնում են: Այդ մարդիկ Աստուծոյ
հաւատարիմները համարուին մարդերի մէջ, երկրի վրա Ալլահի
փոխանորդները լինին ընդհանուրի համար: Աստուծոյ սիրոյ
համար նրա ծառաների գործերի առթիւ խորհուրդներ կատա-
րեն, ինչպէս իրենց սեփական գործերի համար ջանք են գործ
դնում: Ժողովրդի շահերին վերաբերել ամենաօգտակար
ձայներին ձայնակցելով վճիռներ արձակեն:»

Թէև պնդել, կրկնել է Բէհան Նասր էդդին շահի գրած
թղթերում, թէ իւր վարդապետութիւնը ամփոփուած է սոսկ
մարդու հոգեկան-կրօնական հայեացքների սահմանաւորութիւ-
նով, նա աշխարհային-քաղաքական խնդիրները, իշխանութիւն-
ների չի միջամտել, արգելել է հետևորդներին հետամտել քա-
ղաքական հարցերի: Բայց նա, որպէս հետևորդ Մովսէսի, Յի-
սուսի, մանաւանդ Մահմէդի, ծնած ու արտադրուած դրանց
օրէնսդրութիւնից, չէր կարող կրօնաքաղաքական օրէնսդրու-

Թիւնը բոլորովին բաժանել քաղաքացիական կողէքսից: Նրա «Բիթարի-Ազդէսը», «Նշանաւոր միապետներին», «Թէհրանին» և «Ալէմին» ուղղած թղթերը որոշ կերպով ծրագրում են համայնական և ուսմանական վարչութիւն, որ կառավարէ, դատէ հետևորդներին: Յայտնի բան է հետևորդները անպայման ձգտելու են իրազործել իրանց տրուած այս պատգամը: Ի՞նչ կարող է անել այս դէպքում Բէհաի հետևորդը, կը նրան արգելուած է ոչ միայն Ահաթը (կրօնական պատերազմ) զինելը, պատերազմի գնալը, մարդկային արիւն թափելը, յարձակուելը, այլ շատ խիստ ու որոշ օրէնքով արգելուած է «Միֆան» (ինքնապաշտպանութիւնն) անգամ, անձը որևէ բռնութեան դէմ պաշտպանելն անգամ: Բէհականը և ոչ մի դէպքում բռնութեան դէմ զինուելու իրաւունք չունի, չը պիտի զիմազրէ. այսպիսի պարագային նրա դէնքը միայն լեղուն է, որով պիտի համոզէ՝ առանց նախատինքի և հայհոյանքի:

Բէհան շատ լաւ ուսումնասիրած լինելով իսլամի աղանդները, նրա տենչանքն եղել է, որ հետևորդների մէջ Հաշիշի-նէրի նման տեոորիստներ, Դարասի-Դիւրզլինների նման նենգապետ առիւնուշաներ, Էօմէրի նման բռնակալ իսլամացնողներ և յաջորդական իշխանութեան համար Ալիի նման արիւնահեղ մարտնչողներ չյառաջանան: Նրա ամենագլխաւոր և միակ նպատակն է եղել հետևորդներին խնայառ ազատել այդպիսի զարհուրելի և բարբարոսական կոտորածներից:

43. Նոյնպէս նորաղանդների Բէյթ-Իւ-Ալլ (արդարութեան համայնքի), որ իսլամի Բէյթ-Իւ-Մալի (Հասարական գանձի) նմանողութիւնն է, որտեղ կուտակուելու և որտեղից բաժանուելու է ժողովրդից ստացուած 19-բնական տուրքը, հարկը, տուգանքը, ժառանգութիւնը ևն, մի այնպիսի հիմնարկութիւն է, որ միայն քաղաքական իշխանութիւնը կարող է գործադրել: Բէհայի վարդապետութեան քաղաքական աստառի մի նշանաւոր կէտն էլ այն է, որ նա առաջարկում է աշխարհի բոլոր տիրողներին միանալ, մի գերագոյն ժողով կազմել, դաշնաւորուել մշանջնաւոր «Մեծ խաղաղութեամբ», ջնջել զինուորականութիւնը, զէնքը, զինաթափուիլ և զօրանոցները յատկացնել գիտութեան տաճարներին: Նա մի այնպիսի դաշնակցութիւն էր երազում, որ բոլոր դաշնակիցները ի հարկին միահամուռ ոյժով ճնշեն նրան, որը որևէ ընթացքով մտածէ վրդովել ընդհանուր խաղաղութիւնը: Այս առթիւ «Ալէմին» (ընդհանրական) ուղղած թղթում յորդորում է, որ զիմնականների մի վեհաժողով այնպիսի միջոց ձեռք առնէ, որ համայն

մարդկութիւնը պարտաւորացնէ միեւնոյն լեզուով կարդալու, գրելու, խօսելու, միեւնոյն տառերով և միեւնոյն ուղղութիւնով դաստիարակելու ապագայ սերունդը: Այս թղթի մէջ հրամայուած է հետևողներին աւելի սերտ կերպով կապուել այն իշխանութեան հետ, որն իրենց աղատութիւնի կտաւ ճշտութեամբ կատարել օրէնքներն ու պատուիրանները, հաւատարիմ հոգւով և անկեղծ եռանդով աջակցել ու ջանալ, որ այդպիսի իշխանութիւնը զարգանայ, պայծառանայ առաջանայ և իւր իշխանութիւնը տարածէ իրենց կեղեքիչներին, հարստահարողներին, հալածողներին և բարբարոս տանջողներին վրայ:

44. Այս քարոզութիւններին տարածուելուց և ամէն կողմ քարոզուելուց յետոյ, Բաբինները իրենց անբերի բոլոր զէնքերը ցրուեցին, խաղաղութեան զէնքով—համբերութեամբ զինուեցան և լռելեայն տարածեցին իրենց վարդապետութիւնը: Մի տասնեակ տարի այլ ևս չկրկնուեցին արիւնահեղութիւնները, թէև մասնակի հալածանքը, տանջանքը, կողոպուտը անպակաս էր, բաբինները ենթարկուած էին անարգանքի, զրկանքի, բայց որևէ ընդդիմութիւն չը նկատելով, ամէն բան շուտով վերջանում էր: Բայց այս հլու հպատակութիւնն և ծայրահեղ համբերատարութիւնը դարձեալ չօգնեց, նրանց չփրկեց: Իսֆահանբերատարութիւնը դարձեալ չօգնեց, նրանց չփրկեց: 18,000 թուցի երկու եղբայր՝ Սէիդ Հասան և Սէիդ Հիւսէյն 18,000 թուման (մօտ 50 000 ռուբլի) պահանջ ունէին քաղաքի առաջին ներէր փնտռում այդ գումարը կլանելու: Նա մասնեց երկրի կառավարչապետին, թէ այդ Սէիդ եղբայրները չբաբիական են, նրանց աներում ժողովներ է կատարուած, քարոզութիւններ է լինում հակառակ շիական վարդապետութեան: Իսկոյն սկսեցին քննութիւնը, կալանաւորեցին եղբայրներին, կեղեքեցին, կողոպտեցին, տուն ու վաճառատուն աւարի մասնեցին, ցրուեցին և նրանց էլ զարհուրելի տանջանքներով սպանեցին (1295 թ. հիշ. 1879 թ.), որոնք մինչևի մահ սիրով, համբերութեամբ դիմացան ամէն մի տանջանքի: Այս վերջը թէև շատ խոր խոցեց Բէհաի սիրտը, բայց նա դարձեալ անվրդով կրկնեց—սիրով ու համբերութեամբ տանել այդ տանջանքները և զինուել համոզիչ լեզուով: Ցաւում էր, որ խեղճ եղբայրներին հարիւր հազար թումանի կարողութիւնը անիրաւաբար փչացրել էին աւազակաբարոյ պաշտօնեաները և նրանց անմեղ արիւնով ու զոգել, ներկել իրենց դռները, բայց կրկին ու կրկին պատուէր էր գրել և շրջաբերական տարածել, որ և ոչ մի դէպքում, ոչ մի պարագայում չը զինուել, չը դիմադրել դահիճ-հալածողներին:

րին: Միայն համբերութեամբ թշնամիներին դիմաւորելը անշնամի դժուար լինելով, հետևողները անվերջ դիմել, բացատրութիւններ և արտօնութիւններ էին խնդրել, բայց անողոք դատաւորը վճիռը չէր փոխել:

45. «Ալէմ» ընդհանրական թղթի յառաջարանի աւետիսներինց տասնև երեքերորդը լրացնում է այս պակասորդը և միշտ կարող է բաւարարել Բէհախների այս պահանջը: Բէհան օրէնսդիրը նրանց տուել է մի ելք, մի ուրիշ ճանապարհ, որով նրանք, առանց դուրս գալու իրենց օրէնքի սահմանից, կարող են ձգտել հաստատելու աշխարհային իշխանութիւն, իրենց ձեռքն անել ևս երկրի վարչութիւնը: Այս յօդուածով, համաձայն «Թիթարի-Ադդէսի» որոշուած զուտ կրօնական խնդիրների, աղօթքը, ծովապահութիւնը, յաւիտենականութեան վարդապետութիւնը և ուրիշ հոգևոր հարցերը անփոփոխ հրատարակելով քաղաքական-վարչական գործերը ամբողջապէս յանձնում է ժողովրդից ընտրուած «Ռիշալի-ժողովին»: Պետական, վարչական, անտեսական, արդարադատական, վերատեսչական բոլոր գործերը յանձնուելով այս ժողովին, սա ինքնըստինքեան դառնում է մի զուտ քաղաքական մարմին, անշատ կրօնական-կանոնական օրէնսդրութիւնից, որը սահմանուած է գրաւոր և պահպանուելու է անփոփոխ: Այդ աւետիքի մէջ բառացի կերպով որոշուած է, թէ—«Աշխարհային քաղաքացիական գործերի համար անհրաժեշտ է ամէնօրուայ համար նորանոր հրամաններ, ամէն ըրպէի համար նորանոր վճիռներ, համայն ժամանակի—դարի պահանջին»: Հետևաբար «Ռիշալի-ժողովը» ինչպէս գործադիր, նոյնպէս օրէնսդիր մարմին է կազմում քաղաքացիական բոլոր խնդիրների համար: Հրամայուած է այդ ժողովի անդամներին ամէն մի որոշման ժամանակ որոշ «օգտակարութիւնն» աչքի առաջ ունենալ: Եւ, որ ամենազխաւորն է,— «Այդ անձնաւորութիւնները, որոնք Աստուծոյ սիրոյ համար պիտի կանգնեն, նրա լիազօրներն են, Աստուծոյ աներևութներգործութիւնով ներշնչուած պիտի կայացնեն իրենց որոշումները: Սրանց կատարելապէս հնազանդութիւնը ամէն մի հետևողի համար պարտաւորեցուցիչ է»—Աստուածային պատգամով: Շատ պարզ է, որ ժողովրդից ընտրուած այս ժողովը, որպէս օրէնսդիր մարմին, կարող է ինչպէս աղմիխտարական, նոյնպէս քրէական, քաղաքական, վաճառականական, ուսումնական, հանրային, համայնական օրէնսդրութիւններ խմբագրել, հաստատել, հրատարակել, որի վճիռներին—որոշումներին անպայման պարտաւոր են հնազանդել և գործադրել Բէհաէան-

ները, Ուստի «Ռիշալի-Աղլը» իւր անսահման իրաւունքով, որ բղխում է աստուածային ներգործութիւնից, ներշնչուածից, պետական, հասարակական օրէնքներ խմբագրելիս, կարող է ի հարկին և ինքնապաշտպանութեան վճիռ արձակել, և պետութեան հին կարգերը փոփոխելու և կարևորները սահմանելու, պետական յեղափոխութիւն յառաջացելու:

46: Ինչպէս պատմում են ակնատեսները, որոնք երկար ժամանակ Բէհաի ներկայութեանը եղել են աքսորավայրում՝ Աքէյայում, նրա ոգին երբէք չէ ընկճուել, նա անվերջ պահպանել է իւր թարմութիւնը և վեհութիւնը: Նա որքան որ սիրալիր է եղել իւր հետևորդներին, այնքան էլ անմատչելի՝ օտար-ներին: Աքքէյում նրան օտարականներից շատ քչերն են կարողացել տեսնել և միայն Անգլիացի դոքտոր Երուարդ Բրովնէն է ընդունել իւր ներկայութեան, որը հրատարակեց նրա քարոզութիւնների բովանդակութիւնը և գործերը: Աւանդութիւնը հաստատում է, որ Մէհմէդը հետևորդներից եղած որևէ հարցի պատասխանը յաճախ մի քանի օր ետաձգում էր մինչև ներշնչուիլը, այն ինչ Բէհան ստացած նամակի, կամ առաջադրուած հարցի պատասխանը անմիջապէս տուել է, որոնք իսկոյն արձանագրուել է պատճէնները ուղարկուել: Են կարևոր տեղեր: Չը նայելով որ այսպիսի գրութիւնների թիւը տասնեակ հազարից աւելի է, բայց դեռ ևս և ոչ մի նամակ որևէ բառով չի հակասել, թէ գրուած ահագին հատոր պատգամներին և թէ իրար Սմբողջ քսանը հինգ-երեսուն տարուան ընթացքում գրուած օրնագրքերի, թուղթերի և հրամանագրերի մէջ որևէ հակասութիւն մինչ օրս չէ տեսնուած, այն ինչ ղուրանի 114 սուրիաները իրար հակասում են և վերջինները նախորդների փոփոխութիւնները և լրացնող մասերն են համարուում: Պատմում են ակնատեսները, որ Բէհան ամբողջ ժամերով անվերջ ման էր գալիս իւր դահլիճում, անընդհատ թելադրելով, իսկ Միրզա-Աղաջանը մի անկիւնում նստած սղագրութեամբ, վարմանալի արագութեամբ նրա շրթունքից թոած ա՛մէն մի բառը իսկոյն արձանագրում էր և ապա ազատ ժամերին սրբագրում: Երբեմն երեսուն, քառասուն ժամ անընդհատ թելադրել է Բէհան, իսկ Միրզա-Աղաջանը առանց տեղից բարձրանալու արձանագրել է, մեքենայական արագութեամբ: Այս պարագաները ստիպում են ենթադրելու, որ Բէհան մեծ ոյժ է ունեցել ներշնչուելու և ներշնչելու: Այս պարագան աւելի հաւանական պիտի թուի, եթէ վերև յիշուած միապետների թղթերի մէջ արձանագրուած կանխասացութիւնները աչքի առաջ

բիրենք, որոնք կատարուեցան ժամանակին: Նա անչափ աներկհիւղ և ինքնավատար է եղել: Երբ զօրանոցում եղած ժամանակ թուրքերը թնդանօթները ուղղել են Բէհաին և հետևորդներին՝ ուժակոծելու, սարսափը սփռուել է ամէնքի սրտում, Բէհան ուղղել է դէպի գնդակը և հրամայել է Միրզա-Աղաջանին, մի վհատուիք, նստիք և գրիք: Ու թելադրել է նրան մի ահաւոր գրուածք: Բէհաի գրուածքների ոճը, ձևը, բովանդակութիւնը և կանխասացութիւնները մեզ ստիպում են մտածելու, որ նա դրականապէս համոզուած էր, թէ իւր շրթներէց խօսում էր Աստուծոյ Բանը, որ ինքը ուղարկուած էր, իրեն կոչումն էր բանդել հին կարգերը և սահմանել նորերը: Նա առանց զգալու բնածին պայծառատես, մագնիսիք-հիպնոտիստ էր: Մի անգամ Թաւրիզեցի-Մարաղեցի ուխտաւորներ որոշում են իրենց մըտքում, թէ Բէհաին ներկայանալիս, եթէ նա խօսի իրենց հետ թուրքերէն, այն ժամանակ անպայման հաւատան, որ նա անյայտից է նիրշնչուում ամէն պարագայում: Երբ հոգի երբ միասին մտնում են Բէհաի դահլիճը, նա սկսում է.— «Ո՞ջ գեալդդ, Սաֆա գեալդդ, ամա թուրքի դիւր՝ ջէհէնէմ դիւրդիր,» Լիսան Արաբի իստ...»

Ուխտաւորները կարկամում են իրենց մտածած փորձի և կասկածների առթիւ:

47. Համաձայն Բաբի և Բէհաի վարդապետութեանն, Բէհաիները դաւանում են, որ տիեզերքի տէրը՝ Արաբիչը և բոլոր զօրութիւնների անսահման հրամանակալը Աստուած է, որ ամենակալ է, ամենազթած և ամենազէտ: Նա ոչ սկիզբ ունի, ոչ էլ վերջ, ինչպէս նրա ստեղծած տիեզերքը: Գոյութիւն ունեն հրեշտակները և դևեր, միայն մարդկային կերպարանքով և ապրող մարդերի շրջանում, որպէս կատարեալ մարդ, առանց զգալու թէ իրանք դև են, կամ հրեշտակ: Երկիրը և նրա բուսական ու կենդանական թագաւորութիւնը առաջացել է հիւլէներէց, զարգացել է աստիճանաբար անհուն դարերէց ի վեր, աննկատելի գոյութիւններից հասել է մինչև մարդկային կատարելութիւնը: Աստուած ստեղծել է ամէնից առաջ—Բանը, որն ինքն է,—իւր խօսքն է, իւր էութիւնն է, այդ բանը ուղարկել է—իւր խօսքը հասցրել է մարդկութեան մարգարէների բերանով, որոնք կարգեր են սահմանել, օրէնքներ են դրել համաձայն գերագոյն ներշնչման, Աստուածային ոգու ներգործութեան, որոնք խոստացել են մարդկային ազգին, թէ ինքը՝ Աստուածային հոգին էլ յայտնուելու է աշխարհին: Ինքն Աստուածային հոգին անդրադարձաւ Բէհաի սրտում և նրա շըր-

Թունքներից քարոզեց բանը, հիմնեց օրէնքը, հաստատեց կարգերը, սահմանեց պարտականութիւնները: Աստուած մի է, ոչ որդի, ոչ զուգակից, ոչ հաւասարակից, ոչ էլ ստորադաս չունի: Բէհան սոսկ մարդ էր. մարմինը մարդկային — հողային, ինչպէս բոլոր արարածներինը, միայն Աստուածային հոգին այնտեղ չնակելով, Բանը քարոզեց մինչև կտակն աւանդեց թողեց համարձաւ (23/16 մայիսի 1892 թ.), խոստանալով հազար տարի յետոյ մի մարգարէ ուղարկելու կրօնը վերանորոգելու և հինգ հարիւր հազար տարի յետոյ կրկին մարդկութեան յայտնուելու Աստուածութիւնն անմարմին է, մարմնաւորութիւնն էլ չի կարող Աստուածանալ:

48. Աքքէի զօրանոցից դուրս գալուց յետոյ, Բէհան բերդից կէս փարսախ հեռաւորութեան վրայ մի կալուած գնեց, Կասրի-Բահչէ անունով, որտեղ առանձնացաւ ընտանիքի և մտերիմների հետ: Նա հազիւ էր .կալուածքից դուրս գալիս, իսկ եթէ բերդ գնալու կարէք էր լինում, նա ձիաւորում տանից դուրս էր գալիս արևը մայր մտնելուց երեք-չորս ժամ յետոյ, որդիների ուղեկցութեամբ և գիշերն էլ անպատճառ վերադառնում էր: Տանը կեանքի մեծ մասը անցկացրել է իւր դահլիճում, ուր թելադրում, կամ գրում էր պատգամները և ընդունում էր հետևորդներին: Շատէր սիրում նոյնպէս իւր պարտէզը, խիտ ծառաստանը, որի շրջաքի տակ յաճախ շրջակայում և քարոզում էր ունկնդիրներին: Աքքէ մտնելիս առաջին անգամ նա իջաւ նաւից Քարմէլ լեռան ստորոտը, որտեղից անմիջապէս լեռան վրայ բարձրանալով մեծ հաճոյք ստացաւ գեղանկար տեսարանից, ընդարձակ հորիզոնից, որից շատ շուտ իջնելու և զօրանոցում բանտարկւելու էր պարտաւորուած: Առանց յատուկ թոյլտուութեան ոչ ոք իրաւունք չունէր նրան ներկայանալու, հեռաւոր աշխարհից երկրպագունները նախ պիտի գրաւոր թոյլտուութիւն ստանային, որ կարողանային գալ նրան տեսնել: Առանց կանխօրէն թոյլտուութեան գնացողները, առանց տեսնելու էլ վերադարձել են: Նրա ուտելիքը, հագնելիքը թէև շատ պարզ էր, բայց աշխարհի ամէն կողմից հետևողները նրան ուղարկում էին ամենաընտիր բերքերը և նուրբ գործուածքները: Աշխարհի ամեն կողմ Բէհական օրիորդների ձեռագործ ամենաընտիր կերպասները, կտորները և գոյքերը ուղարկւում էին Կասրի-Բահչէ: Չինաստանից ընտիր թէյ, Մոսկովից՝ սուրճ, Պարսկաստանից՝ քաղցրաւենիք, Հնդկաստանից՝ համեմունք, Միջագետքից կարագ, կղզիներից ձիթապտուղ-ձէթ նա այնքան շատէր ստանում, որ բաժանում էր ոչ միայն հե-

տևորդներին, այլ Աքքէի թուրք պաշտօնականներին և բանտարկուածներին ն էլ մաս էր հասցնում: Ամէն օր նրա սեղանասնից մի քանի «խոնչա» կերակուր պիտի գնար Աքքէի կալանաւորներին, աքսորեալներին, որոնց յատկապէս իւրայիմների խնամքին էր յանձնել: Նա ստացածները չէր պահում և ամէն նուէր բաշխում էր պատահածին: Մի անգամ նա Պարսկաստանից ստացաւ մի ամենաընտիր սեղանի սփռոց, որը խիտ ասեղանագործուած էր ընտիր նկարներով մետաքսի թիւերով: Այդ գործի վրայ ամբողջ երկու տարի աշխատել էին մի խումբ օրիորդներ: Ճաշակի և փողի աէր մի ամբերիկացի դրան կարող էր հազար ոսկի տալ առանց խաբուելու, այն ինչ Բէհան նուէր ուղարկեց բերդի «Կօմանդանին»: Բէհաի լուսանկարը գոյութիւն չէ ունեցել, նրա մի օրինակ պատկերը նկարուած է, այն էլ դէմքի, աչքի գլխաւոր գծերը քօղի տակ և գտնուած է Աքքէում: Ինչպէս նկարագրում են միջահասակ, վայելչակաղս, գեղադէմ, սև աչքեր և մազեր, սպիտակ մորթ երկնային, ճոխ մորուք ու մազեր ունէր: Նա ամէն առաւօտ վաղ մաքրուելուց յետոյ, կարճ խոյրը (պարսկական գտակ) ծածկում և նստում էր իւր գործի սեղանի առաջ դրած յատուկ թիկնաթոռին, որին ոչ ոք չէր կարող խանգարել, մինչև ինքը չը պահանջէր:

Ինչպէս պատմում է Միրզա Ջէլիլը, որի անուանը Բէհան տւած է «Իշրագաթ» լո՛նը, որը մնացել է մօտ երկու ամիս Կասրի-բահչեում, Բէհաի դէմքը այնպիսի քաղցրութիւն, այնպիսի քնքրութիւն էր արտայայտում և այնքան գրաւիչ էր, այնպէս խոր ակնածութիւն էր ներշնչում, որ ներկայացողը չէր կարողանում մի քանի տեսութեամբ, մի քանի ժամով բաւականանալ: Շատ շատերը մի քանի անգամ դիմել և նորից թոյլտուութիւն են խնդրել Պարսկաստանից, շնդկաստանից, Թուրանից նրան կրկին ու երեքկին անգամ տեսութեան գնալու: Նա անչափ համեստ էր վարում ներկայացողների հետ և սիրալիր կերպով հարցնում նրանց վիճակը: Մի անգամ իւր ներկայութեան մի յայտնի հընդիկ հետևորդի ընդունելիս, երբ վերջինս չոքեց ու իրկրպագեց, Բէհան նրան արգելեց ու աւաց.—Երկրպագեցէք միմիայն Արարչին, Ամենակալին, որ երկնքումն է, միայն նա է երկրպագելի, իսկ այս բոլորին ձեր դէմ նստած է մի բարեկամ, ձեզ նման համահաւասար հողից ստեղծուած:

49. Բարը և ապա Բէհան անաւոր աշխատութիւնների մէջ հազարից աւելի անգամ կրկնել են և պախարակել են իսլամի «Հադիսները» գրողներին, իբրև Անեբրեյթի հետ յարաբերութիւն

ունեցող պատգամներ տւողներին, մանաւանդ մեկնիչներին (միւրէյին, որոնք Ղուրանի ամէն մի նախադասութիւնը և իւրաքանչիւր բար 72 կերպ բացատրելու էին աքնել, Այսպիսիներին ընդհանրապէս «Շիախ-շանիէ» (հերձուածական այլանդակութիւններ) անուան են տուել և ամենախիստ հրամաններով պատուիրել են հետևողներին չընդօրինակել հին սխալը: Քիթաբի Ազդեսում յատկապէս և ուրիշ գրուածներում անհամար անգամ կրկնուած է, որ բարիները գրութիւնները բառացի կերպով, սոսկ նշանակութեամբ պիտի ընդունեն, լոկ նրանց պարզ իմաստով պիտի առաջնորդուին, երբէք մեկնիչի, գերբնականից ազդուած բացատրողի չըպիտի լսեն: Արդիւ-Վահաբի լոհում գրուած է, որ վերջ է տրուած պատուիրաններին (լոհ) և հրամաններին, եթէ սրանից յետոյ մէկը գայ, դժոխքի (նար) պատգամներին, եթէ սրանից յետոյ մէկը գայ, դժոխքի (նար) պատգամներին, հազարաւոր նշաններով և հրաշքներով, մի լսէք, մի գաւմներ բէրէ, հազարաւոր նշաններով և հրաշքներով, մի լսէք, մի հաւատաք, դրանցից երեսները շուռ տուէք: Ազատութիւն տրուած է ամէն գիրք կարդալու, որքան էլ հակառակ բովանդակութիւն ունենայ, ամէն լեզու սովորելու, ամէն գիտութիւն ուսումնասիրելու, միշտ յառաջադիմելու համար ամէն մի գիտութեան տաճար յաճախելու, բայց նոր յայտնութիւն, նոր մարգարէ, նոր առաքեալ, նոր յարաբերակից մեկնիչ ընդունելու իրաւունք չունեն, թէև դրանց հալածելու էլ իրաւունք չունեն: Այս կրկնութիւնները իսկական և գլխաւոր պատճառն այն էր, որ հետևողները մէջ այնպիսի հերձուածներ ու աղանդներ չը բարձրանան, ժողովուրդը չը բաժանեն, կուրսերի, վէճերի, առիթ չբաճան, և, որ ամենապլխաւորն է, վարդապետութիւնը չայլանդակեն:

50. Բէհան մահուանից առաջ գրեց իւր կտակը, որտեղ նա կրկնում է. — «Այս ճնշուածի միակ նպատակը ատելութեանն ոխակալութեան հուրը հանգցնելն է... Գուցէ աշխարհի մարդերի սրտերը համաձայնութեան ճրագով լուսաւորուին և իսկական խղաղութեան հասնին...»: Յետոյ աւելացնում է. — «Աշխարհի մարդիկ, Աստուծոյ կրօնը սիրոյ և միաբանութեան համար է սահմանուած, այդ բանը երկպառակութեան առարկա մի դարձնէք...: Վերջը շարունակում է. — Աստուծոյ կտակն այս է. ճղները (ագասան), ազգակիցները (աֆնան), բոլոր շաղկապուածները պէտք է իրենց հայեացքը ուղղեն դէպի «մեծ-ճիւղը» (ղուանի ազամ), Աչքերդ դարձրէք դէպի մեր ուղարկած սուրբ-գիրքը (Քիթաբի ազդէս). «Երբ կանդրադառնայ միացման ծովը և կըրանայ սկզբի և վերջի գիրքը, Ալլահի կամեցած կողմը ուղղեցէք (ձեր աչքերը), որը հին արմատի շառաւիղն է»: Այս այսպիսի (Հատուածի) նպատակը «Մեծ ճղին» (ղուանի-Ազէմ) է ուղղուած:

Նոյնպէս մենք հրատարակեցինք մեր ողորմած պատգամով և նա—ամենաողորմածաբար և առատաբաշխաբար: Ճշմարիտ Աստուած նախասահմանեց «Բարձր-Ճղի» (Ղուանի-Աքբէրի) կարգը նրա կարգից յետոյ, որովհետև նա—Հրամանակալ և Ամենագէտ է: Մենք Աքբէրի կարգը Աղէմից յետոյ դասաւորեցինք, հրամայեցինք Ամենագէտի, Վերահսկողի հրամանով: Ամէնքից անհրաժեշտ է սէր դէպի շառաւիղները (Ազսան), բայց Աստուած չի սահմանել նրանց բաժին հասարակութեան գոյքից:»

Կտակի այս մասը դարձաւ հակառակութիւնների և վէճերի պատճառ, հակառակ օրէնսդրի անհուն ջանքերին. որով բաժանուեցին բէհականները երկու մասի, ճիշտ այնպէս ինչպէս Մահմէդից յետոյ Շիաները բաժանուեցին սիւննիներին: Բէհան հրամայեց, որ իւր արմատից ճղնաւորուածները և շաղկապուածները, Բաբի արիւնակիցների հետ իրենց հայեացքը նախ ուղղեն դէպի «Մեծ-Ճիւղը» (Ղուանի-Աղէմ), որին դիմելը Ալլահից նախասահմանուած է, իսկ հետևորդները այդ հրամանը կատարելով, հպատակուելով, ինչ ինչ նախասահմանեալ արտօնութիւններ են վերագրուում «Աղէմին»: Աղէմի որևէ հոգևոր իշխանութեան դէմ բողոքում է Աքբէրը, որին երկրորդ կարգին էր դասաւորել օրէնսդիրը: Ազամի հետևորդները պնդում են, որ իրենց վրայ կարգուած վերատեսչին նախասահմանութիւնից իրաւունք է տուած դիմողներին բացատրելու, որոշելու Գրքի իմաստը, հրամաններ արձակելու կրօնական խնդիրներում: Իսկ Աքբէրը ժխտեց այդ արտօնութիւնները և ազէմի ընթացքը օրինազանցութիւն յայտարարեց:

Աքբէրի այս բողոքը Բէհաի կտակի ընդդիմութիւն համարելով, Աղէմի հետևորդները Աքբէրին անուանեցին կտակազանց:

51. Վէճի իսկական պատճառը պարզելու համար, կարևոր է հերձուածի պատմութեան և առիթների հետ ծանօթանալ:

Պէտք է իմանալ, որ Բէհան երեք կիւն է առել: Առաջին կնոջից նա ունի մեծ որդին՝ Աբաս էֆէնդին, որն յայտնի է Ղուանի-Աղէմ, կամ Աղէմ մակղիրով և մի աղջիկ՝ Վարզայի-Քիւրբէ անունով: Երկրորդ կնոջից նա թողեց երեք որդի՝ Մէհմէդ-Ալի էֆէնդին, Ղուանի-Աքբէր, կամ Աքբէր մականունով է յայտնի, Զիաուլլահ, որը հօրից մի քանի տարի յետոյ մեռաւ. և Բէհիւլլահը: Այս կիւնը ունեցաւ երկու էլ աղջիկ՝ Յրուպիէ և Սամազիէ անունով: Իսկ երրորդ կիւնը, որ առաջի կնոջ մա-

հուանից յետոյ է առել, միայն մի աղջիկ ունեցաւ: Եղբայրնե-
րը Ազէմ ու Աքբէր տարբեր մօրից ծնած լինելով, նրանց բնա-
կանաբար յարաբերութիւններէ մասին կարելի երևակայու-
թեամբ անգամ գաղափար կազմել եթէ մարդ արեւելքի բազմա-
թիւ ժողովուրդի առտնին կենդանի մասին որոշ ծանօթութիւն
ունենալ:

Աքիէն աքսորավայրում ապրած միջոցին, Բէհան կառա-
վարութեան դռներէ վերաբերեալ բոլոր գործերի վարչու-
թիւնը, պաշտօնակալների հետ յարաբերութիւնը յանձնել էր
Ազէմին: Աքբէրը միշտ հօր մօտ կասրի-Բահչէ ապրելով, ու-
սումնասիրել էր նրա գրութիւնները: Ոչ միայն բոլոր թղթակ-
ցութիւնների հսկողութիւնը սրան էր յանձնուած, նա կարդում
էր բոլորը, ընդօրինակել տալիս, այլ կարևորագոյնները մեծ
մասամբ ինքն էր գրում հօր թելադրութեամբ: Այնպէս որ վար-
դապետութեան, կրօնի էական խնդիրներէ ոչ մի բան Աք-
բէրի աչքից խոյս չէ տուել, նա շատ հմտացել է, այն ինչ Ա-
զէմը Աքբէաի բերդում ապրելով անտեղեակ է մնացել գրու-
թիւններից շատերին: Մինչև անգամ Բոմբէից էլ Աքբէրն էր
գնացել հօր գրուածների տպագրութեան հսկելու, սրբագրելու:

ԱՏՐՊԵՏ

(Վերջը միա անգամ)